

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-001

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԲՎ ՓԲԸ-Ի

(հրավաքանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ)

ՄԻՋԵՎ

առողջապահության նախարարությունը,

(այսուհետ՝ Պատվիրատու)

որպես բժշկական օգնության և սպասարկման պետական պատվեր տեղադրող, մի կողմից՝ ի դեմս առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի պարտականություններ կատարող՝ Վահե Հակոբյանի, որը գործում է առողջապահության նախարարության կանոնադրության հիման վրա և

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ ՓԲԸ-ն (լիցենզիա*)

(այսուհետ՝ Կատարող)

ի դեմս տնօրեն՝ Արման Հովակիմյանի, որը գործում է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (միայն իրավաբանական անձանց դեպքում), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում, իսկ Կատարողը պարտավորվում է առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում ցուցաբերել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում (այսուհետ՝ Բուժօգնություն) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դրա իրավունքը ունեցող անձանց՝ Պատվիրատուի կողմից թույլատրված Բուժօգնության տեսակների գծով, սույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված ծառայություններով և գներով, սույն պայմանագրի հավելված 2-ով սահմանված պայմանագրային գումարի շրջանակներում:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կատարողն իրավունք ունի.

- 2.1.1. սույն պայմանագրով սահմանված կարգով ստանալ փոխհատուցում սույն պայմանագրի պայմաններին համապատասխան ծավալով և որակով մատուցված Բուժօգնության համար,
- 2.1.2. անհրաժեշտության դեպքում հիմնավորել Պատվիրատուին ներկայացված Բուժօգնության վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատությունը՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով,
- 2.1.3. հերթագրման ոչ ենթակա դեպքերում Բուժօգնության պայմանագրային ծավալների ամսական համամասնությունների գերակատարման հետևանքով հաշվետու ժամանակահատվածում չներկայացված հաշվետվությունները ներկայացնել Պատվիրատուին փոխհատուցման՝ սույն պայմանագրով հաստատված պայմանագրային գումարի շրջանակներում,
- 2.1.4. ներկա գտնվել Պատվիրատուի կողմից բժշկական կազմակերպությունում իրականացվող դիտարկումներին, մշտադիտարկումներին, ուսումնասիրություններին, փորձագիտական գործունեությանը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկել Պատվիրատուի գործողությունները,
- 2.1.5. օգտվել ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

2.2. Կատարողը պարտավոր է.

- 2.2.1. Բուժօգնությունն իրականացնել ոլորտը կարգավորող օրենքներին, որոշումներին և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի (այսուհետ՝ Նախարար) անհատական և նորմատիվ հրամաններին համապատասխան,
- 2.2.2. յուրաքանչյուր ամսվա համար մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 2-րդ աշխատանքային օրվա աշխատանքային ժամի ավարտը (դեկտեմբեր ամսվա համար մինչև դեկտեմբերի 15-ին հաջորդող 2-րդ աշխատանքային օրվա աշխատանքային ժամի ավարտը) էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով ամփոփել և ներկայացնել Բուժօգնության շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ (նախարարի 24.01.2011թ-ի N 63-Ա հրամանով հաստատված «Պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքներն ըստ բյուջետային ծրագրերի և բժշկական ծառայությունների տեսակների» հաշվետվությունը /Ձև N HP-011/ և /Ձև N SC-011/) պայմանագրային գումարի ամսական համամասնությունների ծավալներին համապատասխան՝ սույն պայմանագրի 5-րդ հավելվածով սահմանված չափաբանակների շրջանակներում, հավելված 2-ով նշված ծրագրերին համապատասխան առանձին ընդունման-հանձնման արձանագրություններ և հաշվարկային փաստաթղթեր, ինչպես նաև իր կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ նախարարի կողմից և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվություններ, ձևեր և տեղեկանքներ,

* Կ-XX-000646 տրված 13/12/2004թ-ին, Կ-XX-001210 տրված 30/05/2008թ-ին, Կ-XX-000046 տրված 25/11/2009թ-ին, Կ-ԲՕ-001804 տրված 10/06/2013թ-ին, Կ-XX-000154 տրված 06/06/2003թ-ին, Կ-XX-000247 տրված 08/09/2003թ-ին, Կ-XX-000395 տրված 26/11/2003թ-ին, Կ-ԲՕ-002070 տրված 27/07/2015թ-ին , :

2.2.3. ապահովել սույն պայմանագրին կից «Ծառայությունների մատուցման պայմանները» (հավելված 3),

2.2.4. Պատվիրատուի կողմից էլ. առողջապահական համակարգի տվյալների փոխանցումն ապահովող ցանցի (data network) ներդրման դեպքում 14 օրյա ժամկետում միանալ տվյալ ցանցին՝ միևնույն ժամանակ ունենալով էլ. առողջապահական համակարգի տվյալների փոխանցման ցանցը սպասարկող մատակարարից տարբերվող այլ մատակարարի կողմից մատուցվող պահուստային կապուղի՝ ապահովելով 10 օգտատիրոջ հաշվով 2 մբ/վ սիմետրիկ ինտերնետ սնուցում,

2.2.5. ապահովել սույն պայմանագրի շրջանակներում իրականացվող Բուժօգնության մասին տեղեկատվության հրապարակայնությունը, այդ թվում՝ բնակչության համար տեսանելի վայրում տեղադրելով համապատասխան տեղեկատվություն Բուժօգնության տրամադրման հետ կապված հարցերի կամ բողոքների ներկայացման կարգի Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշմամբ հաստատված բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1717-Ն որոշմամբ հաստատված բնակչության սոցիալական խմբերի և այն հիվանդությունների ցանկերի, որոնց դեպքում դեղերը հատկացվում են անվճար կամ արտոնյալ պայմաններով, Նախարարի հրամաններով հաստատված «Հիմնական դեղերի ցանկի», հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ցանկերի և սահմանված արտոնությունների մասին,

2.2.6. պացիենտի հետ կնքել Նախարարի 2011 թվականի փետրվարի 4-ի թիվ 12-Ա և 2011 թվականի փետրվարի 1-ի թիվ 104-Ա հրամաններով հաստատված համավճարային կամ վճարովի հիմունքներով հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագիր,

2.2.7. ապահովել պետության կողմից երաշխավորված անվճար Բուժօգնություն ստացող անձանց իրազեկման թերթիկի լրացումը և տրամադրումը պացիենտներին՝ համաձայն Նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 3274-Ա հրամանով հաստատված կարգի,

2.2.8. ապահովել գոյացած ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործումը՝ պահպանելով ծախսերի իրականացման հետևյալ առաջնահերթությունները.

2.2.8.1. աշխատավարձ,

2.2.8.2. հարկային պարտավորություններ,

2.2.8.3. դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնում,

2.2.8.4. այլ ծախսեր,

2.2.9. սահմանել աշխատողների աշխատավարձը, այդ թվում՝ ըստ բուժաշխատողների տարբեր կատեգորիաների աշխատավարձի նվազագույն ամսական չափերը, Նախարարի հրամաններով հաստատված՝ աշխատողների աշխատանքի վարձատրության հաշվարկման և վճարման չափորոշիչներին համապատասխան,

2.2.10. ապահովել Պատվիրատուի կողմից սահմանված կարգով և հաստատված ձևերով իրականացվող Բուժօգնության հաշվառումը, գրանցումը, մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ՝ սահմանված ժամկետներում և տեխնիկական չափանիշներին համապատասխան, ինչպես նաև ապահովել էլեկտրոնային առողջապահության համակարգի սպասարկումը սեփական միջոցներով,

2.2.11. դեպքերի անհատական վարում իրականացնելու նպատակով (case management) Նախարարի կողմից հաստատված ծրագրերի կամ ծառայությունների մասով ապահովել հաճախորդների այցելությունների, բժշկական միջամտությունների, մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ դրանց փաստացի կատարման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում,

2.2.12. ապահովել առնվազն բժիշկների, միջին բուժանձնակազմի, ինպես նաև էլեկտրոնային առողջապահության համակարգից օգտվող վարչատնտեսական անձնակազմի նույնականացման քարտերի առկայությունը,

2.2.13. ապահովել հետևյալ տվյալների մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ՝

2.2.13.1. բժշկական և վարչական անձնակազմի անհատական և կոնտակտային տվյալներ,

2.2.13.2. անձնակազմի պաշտոնների և կառուցվածքի վերաբերյալ տվյալներ,

2.2.13.3. բժշկական անձնակազմի աշխատանքային և ոչ աշխատանքային ժամերի վերաբերյալ տվյալներ,

2.2.13.4. բժշկական կազմակերպությունում առկա բժշկական սարքավորումների վերաբերյալ տվյալներ,

2.2.13.5. բժշկական կազմակերպության տվյալները (այդ թվում՝ անվանում, հեռախոս, հասցե, ՀՎՀՀ, պատասխանատուի վերաբերյալ անհատական տվյալներ և այլն),

2.2.13.6. բժշկական կազմակերպության ղեկավարի անհատական և կոնտակտային տվյալները,

2.2.13.7. պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով մատուցվող բոլոր բժշկական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը (այդ թվում՝ նաև առանձին դեպքերով չֆինանսավորվող այցերի մասով)՝ համաձայն էլեկտրոնային առողջապահության համակարգում սահմանված ձևի,

- 2.2.13.8. այլ տվյալներ՝ համաձայն էլեկտրոնային առողջապահության համակարգում պահանջվող տվյալներ,
- 2.2.14. ապահովել սույն պայմանագրի 2.2.13. կետում նշված յուրաքանչյուր տվյալի փոփոխության դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրանց թարմացումը էլեկտրոնային առողջապահության համակարգում,
- 2.2.15. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իր իրավասության սահմաններում ապահովել էլեկտրոնային առողջապահության համակարգից մշակվող տեղեկատվության գաղտնիությունը,
- 2.2.16. ապահովել ներկայացված հաշվետվությունների տվյալների իսկությունը և արժանահավատությունը, որի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ինքն է կրում պատասխանատվություն,
- 2.2.17. նախքան դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնման պլանները և հայտարարությունները հրապարակվելը Պատվիրատուի պահանջով դրանք տրամադրել Պատվիրատուին,
- 2.2.18. պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների համար՝ ապահովել ընկերության տարեկան զարգացման ծրագրով սահմանված ցուցանիշների, այդ թվում՝ շահութաբերության ապահովման կատարումը,
- 2.2.19. պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին անհապաղ գրավոր տեղեկացնել Պատվիրատուին,
- 2.2.20. Պատվիրատուի կողմից դիտարկում, մշտադիտարկում, ուսումնասիրություն, փորձագիտական գնահատում իրականացնելու ամբողջ ընթացքում ապահովել Պատվիրատուին անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի և այլ տեղեկատվության ներկայացումը, ապահովել համապատասխան մասնագետների համար աշխատանքային պայմաններ, օժանդակել աշխատանքները ժամանակին և լիարժեք կատարելու հարցում,
- 2.2.21. ապահովել սույն պայմանագրի գաղտնի հավելված 4-ով սահմանված դրույթների կատարումը, ինչպես նաև այդ դրույթների կատարման հիմքով իրեն հայտնի դարձած, օրենքով պաշտպանվող կամ այլ տեղեկությունների գաղտնիությունը,
- 2.2.22. Պատվիրատուի կողմից սահմանված ընթացակարգով ապահովել բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների գնահատմանն ուղղված կազմակերպչական աշխատանքները, ինչպես նաև ընթացք տալ (իրագործել) գնահատման արդյունքների հիման վրա բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման և աշխատողների աշխատանքային գործունեության վերաբերյալ Պատվիրատուի ներկայացրած առաջարկություններին,
- 2.2.23. սույն պայմանագրի հավելված 2-ով նախատեսված՝ 200,0 մլն ՀՀ դրամը գերազանցող կազմակերպությունը մինչև օգոստոսի 31-ը ապահովում է անկախ աուդիտորի կողմից հաստատված նախորդ տարվա ֆինանսական հաշվետվություններ և աուդիտորական եզրակացություն: Ընդ որում, սույն պայմանագրի հավելված 2-ով նախատեսված 1000,0 մլն դրամը գերազանցող կազմակերպությունների կողմից ընտրված աուդիտ իրականացնող կազմակերպությունը պետք է բավարարի սույն պայմանագրի հավելված 6-ով նախատեսված պայմաններին,
- 2.2.24. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշմամբ սահմանված կարգով բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց Բուժօգնության համար քվտաների շրջանակներում տրամադրված ուղեգրերի վերաբերյալ հանձնաժողով ձևավորող բժշկական կազմակերպությունները Նախարարի կողմից սահմանված կարգով ներկայացնել հաշվետվություն առողջապահության նախարարություն,
- 2.2.25. Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուց հետո 15-օրյա ժամկետում տրամադրել վերջին 2 տարիների ընթացքում պետական պատվերի պայմանագրի շրջանակներում իր կողմից դուրս գրած դեղատոմսերի պատճենները,
- 2.2.26. կատարել Բուժօգնության ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի.

- 2.3.1. սույն պայմանագրի համաձայն, իրականացնել դիտարկումներ, մշտադիտարկումներ, ուսումնասիրություններ, փորձագիտական գնահատում Կատարողի կողմից Բուժօգնության կատարման ընթացքի, Նախարարի կողմից հաստատված չափորոշիչներով և Պայմանագրով սահմանված ծավալների, որակի, Կատարողի գործունեությունը բնութագրող տեղեկատվության արժանահավատության և ստացված ֆինանսական միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման ճշտության և իրավական ակտերով սահմանված պահանջների կատարման և պահպանման վերաբերյալ, սահմանել հայտնաբերված թերությունները սեփական միջոցներով վերացնելու ողջամիտ ժամկետ,

2.3.2. հիվանդանոցային Բուժօգնության մասով իրականացնել Բուժօգնության ընթացիկ մշտադիտարկման աշխատանքներ՝ տվյալ բժշկական կազմակերպությանը կցագրված Պատվիրատուի ներկայացուցիչների միջոցով, որոնց իրավասությունների շրջանակը և կցագրումները ըստ բժշկական կազմակերպությունների հաստատվում են Նախարարի հրամանով,

2.3.3. պայմանագրով նախատեսված աշխատանքների ուսումնասիրության, դիտարկման, մշտադիտարկման, փորձագիտական գնահատման արդյունքներով հայտնաբերված թերությունները վկայակոչելու և դրանց հետ կապված պահանջներ ներկայացնելու՝ աշխատանքն ընդունելուց հետո մինչև երեք տարվա ընթացքում: Սույն կետը կիրառվում է նաև կողմերի միջև մինչև սույն պայմանագրի կնքումը ծագած հարաբերությունների նկատմամբ՝ կապված նախորդ երկու տարիների ընթացքում պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ձեռքբերման հետ,

2.3.4. ամբողջությամբ կամ մասնակի չֆինանսավորել դեպքերի անհատական վարման (case management), մշտադիտարկման, դիտարկման կամ ուսումնասիրություն իրականացնելու ընթացքում հայտնաբերված՝

2.3.4.1. Բուժօգնության այն ծավալները, որոնք ըստ Կատարողի կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով ներկայացված հաշվետվությունների՝ պացիենտին մատուցվել են ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ պատշաճ ծավալի և որակի,

2.3.4.2. պացիենտի ախտորոշմանը չհամապատասխանող լաբորատոր-գործիքային հետազոտություններով կամ բուժման պլանով կամ բժշկի կողմից նշանակված դեղերով բժշկական օգնության մատուցման դեպքերը,

2.3.4.3. ոլորտը կարգավորող իրավական ակտերի դրույթների չպահպանման դեպքերում,

2.3.5. առողջության առաջնային պահպանում իրականացնող կազմակերպություններում Նախարարի կողմից սահմանված Բուժօգնության որակի չափանիշները և ցուցանիշները չապահովելու դեպքում Կատարողի կողմից կատարված փաստացի աշխատանքների ծավալներում իրականացնել նվազեցումներ Նախարարի կողմից սահմանված կարգով,

2.3.6. Կատարողի կողմից սույն պայմանագրով սահմանված միևնույն դրույթը պայմանագրի գործողության ժամկետում կրկնակի խախտելու դեպքում՝

2.3.6.1. կիրառել սույն պայմանագրով նախատեսված տույժեր, տուգանքներ և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության այլ միջոցներ,

2.3.6.2. միակողմանի լուծել պայմանագիրը՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածը,

2.3.7. այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է.

2.3.8. միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է սույն պայմանագրի դրույթները: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

2.3.8.1. մատուցված ծառայությունները չեն համապատասխանում սույն պայմանագրով սահմանված պահանջներին,

2.3.8.2. խախտվել են ծառայությունների մատուցման ժամկետները,

2.3.9. պահանջել պայմանագրով նախատեսված տույժերի և տուգանքների վճարում,

2.3.10. պահանջել և 15-օրյա ժամկետում ստանալ Կատարողի կողմից վերջին 2 տարիների ընթացքում պայմանագրի շրջանակներում իր կողմից դուրս գրած դեղատոմսերի պատճենները,

2.3.11. կրել Բուժօգնության ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

2.4. Պատվիրատուն պարտավոր է.

2.4.1. իրավական ակտերով սահմանված ժամկետներում ընդունել և ամփոփել Կատարողի կողմից իրականացված Բուժօգնության վերաբերյալ ներկայացված հաշվետվությունները և ներկայացնել վճարման,

2.4.2. սահմանված կարգով ապահովել ֆինանսավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի մուտքագրումը և այլ անհրաժեշտ գործողությունների կատարումը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը, իսկ դեկտեմբեր ամսվա առաջին կեսի համար՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը՝ Կատարողի կողմից սույն պայմանագրի 2.2.2. կետով սահմանված ժամկետների պահպանման պայմանով,

2.4.3. կատարողին ցուցաբերել անհրաժեշտ կազմակերպամեթոդական օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պաշտոնական կայք-էջում ստեղծել հատուկ դարան և տեղադրել պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող իրավական ակտերը,

2.4.4. վճարումներ իրականացնելիս՝ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ապահովել Կատարողի նկատմամբ տույժերի և տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը,

2.4.5. եթե պատվիրատուն պայմանագրով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված, և պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պատվիրատուն պայմանագրի կողմին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման ընդունման արձանագրությունը: Ընդ որում, պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստն ամրագրվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը (էլեկտրոնային հասցեով հանձնելու դեպքում հիմք է ընդունվում ուղարկման ամսաթիվը),

2.4.6. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից,

2.4.7. կատարել ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

III. ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

3.1. Կատարողի կողմից սույն պայմանագրի շրջանակներում մատուցված կամ մատուցվող ծառայությունների որակի և ծավալի համապատասխանության գնահատումը սույն պայմանագրի պահանջներին իրականացվում է՝

3.1.1. ՀՀ օրենսդրությամբ և Նախարարի հրամանով հաստատված ընթացակարգով՝ մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների, դեպքերի անհատական վարման (case management) միջոցով,

3.1.2. Կատարողի կողմից դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնման նպատակով կնքված պայմանագրերի, ինչպես նաև գնման գործընթացների ընտրանքային մշտադիտարկում իրականացնելու միջոցով, այդ թվում՝ Կատարողից այդ գործարքներին առնչվող բոլոր փաստաթղթերը պահանջելով և ստանալով, ինչպես նաև մշտադիտարկման արդյունքներով բացահայտված խնդիրների շտկման նպատակով համապատասխան գործողություններ իրականացնելով՝ նախապես համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ (վերաբերվում է միայն 50% և ավելի պետական մասնակցությամբ առևտրային և պետական ոչ առևտրային կազմակերպություններին):

IV. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Ընդ որում, տույժը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ, իսկ տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

4.2. Պարտավորությունների ոչ պատշաճ կատարում է համարվում նաև՝

4.2.1. եթե Կատարողի կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգ մուտքարված տվյալներում յուրաքանչյուր ծրագրի մասով հայտնաբերված թերությունների, անճշտությունների կամ ոչ արժանահավատ դեպքերի թիվը ամսական կտրվածքով կազմում է ներկայացված հաշվետվությունների 5 տոկոսը կամ ավելին,

4.2.2. Կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված Բուժօգնության ծավալները ոչ ամբողջությամբ կամ մասնակի կամ ոչ պատշաճ որակի Բուժօգնության տրամադրումը՝ Պատվիրատուի կողմից Կատարողին սույն պայմանագրի գործողության ընթացքում առնվազն մեկ անգամ գրավոր տեղեկացրել է նախազգուշացնելուց հետո նույն խախտումը կրկնվելու կամ այն չվերացնելու դեպքում,

4.3. սույն պայմանագրով հաշվետվությունների ներկայացման ժամկետները խախտելու դեպքում Կատարողից ուշացման յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ հաշվետու ժամանակահատվածում ներկայացման ենթակա կատարողականի արժեքի 0,05%-ի չափով,

4.4. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով,

4.5. Կատարողը սահմանված կարգով և չափերով պատասխանատվություն է կրում նաև սույն պայմանագրի 3-րդ հավելվածում՝ «Ծառայությունների մատուցման պայմաններում» նշված պարտավորությունների չկատարման համար,

4.6. սույն պայմանագրի շրջանակներում մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների, դեպքերի անհատական վարման միջոցով հայտնաբերված այն խախտումների գումարը, որոնք կատարվել են սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածում, Պատվիրատուն պակասեցնում է Կատարողի ընթացիկ տարվա փաստացի աշխատանքների ծավալից, իսկ սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածից դուրս հայտնաբերված խախտումների արձանագրված գումարը փոխանցվում է ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշիվներին,

4.7. Պատվիրատուի կողմից հայտնաբերված խախտումների ճշտումը չի ազատում Կատարողին իր պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվությունից,

4.8. տուգանքի և տույժի վճարումը Պատվիրատուին և Կատարողին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները ամբողջությամբ կատարելու կամ խախտումները վերացնելու պարտականությունից,

4.9. սույն պայմանագրի շրջանակում նախատեսված տուգանքները և տույժերը հաշվարկվում և վճարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.10. սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Պատվիրատուին և Կատարողին իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե եղել է անհաղթահարելի ուժի ազդեցություն, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

VI. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

6.1. Սույն պայմանագիրը կարող է լուծվել, եթե կողմերը կամ լուծարվել, կամ վերակազմակերպվել, կամ սնանկ են ճանաչվել՝ հատուցելով կողմերի կատարած ծախսերը,

6.2. Սույն պայմանագիրը կարող է լուծվել 2.3.8. և 5.1 կետերով նախատեսված դեպքերում,

6.3. Սույն պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել՝ 7.2 կետում նշված համաձայնագրի կնքումից Կատարողի հրաժարման դեպքում,

6.4. ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 31.12.2019 թվականը: Պայմանագրի պայմանները կիրառվում են 2018թ. դեկտեմբերի 15-ից մինչև պայմանագիր կնքելը, բայց ոչ ուշ, քան 2019թ. հունվարի 31-ը կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև պայմանագիր կնքվելը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է Պայմանագիրը սույն կետի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

7.2. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ (պետական պատվերի շրջանակներում իրականացվող բժշկական օգնության տեսակների նորմատիվներում և գներում, Կատարողի պայմանագրային գումարներում Նախարարի համապատասխան հրամաններով իրականացվող փոփոխությունները և լրացումները) կարող են կատարվել համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագրի փոփոխման կամ լուծման դեպքում տվյալ պահին բուժումը դեռ չավարտած պացիենտների բուժման հետագա փոխհատուցումը իրականացնելու նպատակով, Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պակասեցման ենթակա ծառայության մասով բուժումը շարունակող պացիենտների ցանկը և հիվանդության պատմագրերի համարները:

7.4. Կողմերի միջև վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.5. Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում, արգելվում է կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայությունների ծավալների կամ, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.6. Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.7. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը: Ընդ որում, արգելվում է միևնույն բյուջետային տարվա ընթացքում նույն ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով նախատեսել ֆինանսական միջոցներ:

7.8. Սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց պարտապան Կողմի (ֆինանսների նախարարության) գրավոր համաձայնության:

7.8.1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ գործարքի՝ լիազորված մարմնի կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.9. Սույն պայմանագիրը և նրան կից հավելվածները կազմված են հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, որոնցից մեկը գտնվում է Պատվիրատուի, մյուսը՝ Կատարողի մոտ՝ բացառությամբ գաղտնի հավելված 4-ի:

VIII. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Առողջապահության նախարարություն

ԿԱՏԱՐՈՂ

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ ՓԲԸ

Հասցե Երևան, Կառավարական տուն 3

Հասցե Գյուրջյան 10

Սպասարկող ՖՆ գործառնական վարչություն
բանկ

Սպասարկող Հայէկոնոմբանկ ԲԲԸ Խորհրդային1 մ/6
բանկ

Բանկային 900011105013
հաշիվ
ՀՎՀՀ 02507171

Բանկային 163338200013
հաշիվ
ՀՎՀՀ 00856548

ԱՆ գլխավոր քարտուղարի պարտականություններ
կատարող՝
Վահե Հակոբյան

Տնօրեն՝
Արման Հովակիմյան

/ստորագրություն/

/ստորագրություն/

« 29 » հունվարի 2019 թ

« 29 » հունվարի 2019 թ

Հեռ: +37460808003

Հեռ: +37491405364

Ֆաքս:

Ֆաքս:

E-mail: info@moh.am

E-mail: info@sglmc.am

ՑԱՆԿ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՁԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ և ՍՊԱՍԱՐԿԱՆ ԵՐԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՆԵՐԻ

ԵՐԵՎԱՆ
ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԲՎ ՓԲԸ
(տարածաշրջանի և բժշկական կազմակերպության անվանումը)

Ծառայու թյան կոդը	Բժշկական օգնության և սպասարկման տեսակը և ծառայությունը	Չափման միավորը	Գին	Միավորի օրական գինը (դրամ)
1.2	Բժշկական ընդհանուր պրակտիկա			
0709000	Անվճար և արտոնյալ պայմ. դեղորայքի տրամադրում (փաստացի ծախս)	ԴՐԱՄ	1	
0710000	Մեծահասակների ատոլոգիայի առաջնային պահպանում Երևան քաղաքի պոլիկլինիկաներում (ԱԱՊԻ-հեղ-լաբ)	ԱՆՁ	14.3972	
0710206	Հակատոբերկուլոզային դիսպանսեր բուժօգնություն Երևան քաղաքի պոլիկլինիկաներում	ԱՆՁ	0.4876	
1.3	Մանկաբուժական ընդհանուր պրակտիկա			
0711001	Երեխաների ատոլոգիայի առաջնային պահպանում Երևան քաղաքի պոլիկլինիկաներում (ԱԱՊԻ-հեղ-լաբ)	ԱՆՁ	24.6082	
0711016	Երեխաների բժշկական օգնություն և սպասարկում դպրոցներում	ԱՆՁ	177.5	
0711122	Հոգեչարաքանդանական դիսպանսեր բուժօգնություն (Երեխա)	ԱՆՁ	0.3753	
0719000	Անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքի տրամադրում (մանկ.)	ԴՐԱՄ	1	
1.4	Մանկաբարձագինեկոլոգիական ընդհանուր պրակտիկա			
0711029	Մանկաբարձ-գինեկոլոգի կողմից իրականացվող մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնություն՝ ք. Երևան, ք. Գյումրի և ք. Վանաձոր	ԱՆՁ	2.0383	
0711036	Մանկաբարձ-գինեկոլոգի կողմից իրականացվող հղիների հսկողություն	ՀՂԻ	131.1475	
0757010	Արյան խմորի որոշում (մանկաբարձական և գինեկոլոգիական)	ՀԵՏԱՁՈՏ.	1050	
0757020	Ինգուս գործոնի որոշում (մանկաբարձական և գինեկոլոգիական)	ՀԵՏԱՁՈՏ.	1050	
0757025	ՄԻՎՎ-ի (ՅԼԸ) հետազոտություն (մանկաբարձական և գինեկոլոգիական)	ՀԵՏԱՁՈՏ.	1450	
0757026	ՄԻՎՎ-ի հետ. համար արյան հալաբազում և տեղափոխում (մանկաբարձական և գինեկոլոգիական)	ՀԵՏԱՁՈՏ.	230	
0757030	Հեպատիտ B, Հեպատիտ C (յուրաքանչյուր մեկ հետազոտություն) (մանկաբարձական և գինեկոլոգիական)	ՀԵՏԱՁՈՏ.	1650	
0757040	Դեանցիա TPHA (մանկաբարձական և գինեկոլոգիական)	ՀԵՏԱՁՈՏ.	1900	
0757050	Դեանցիա VDRL (մանկաբարձական և գինեկոլոգիական)	ՀԵՏԱՁՈՏ.	1300	
0757060	Դեանցիա MRP (մանկաբարձական և գինեկոլոգիական)	ՀԵՏԱՁՈՏ.	1050	
0757070	Վասերմանի ռեանցիա (RW)(մանկաբարձական և գինեկոլոգիական)	ՀԵՏԱՁՈՏ.	1050	
0757080	Անվերի և գոնոկոկերի բակտերիոլոգիական բնություն (մանկաբարձական և գինեկոլոգիական)	ՀԵՏԱՁՈՏ.	1650	
0757090	Պարազիտար հիվանդությունների բակտերիոսկոպիկ բնություն արյան մեջ (մանկաբարձական և գինեկոլոգիական)	ՀԵՏԱՁՈՏ.	1450	
0757100	Ինտեգենոգրաֆիա մեկ նկար /ժապավեն 30X40/ (մանկաբարձական և գինեկոլոգիական)	ՀԵՏԱՁՈՏ.	2900	
0757101	Ինտեգենոգրաֆիա մեկ նկար /ժապավեն 24x30/ (մանկաբարձական և գինեկոլոգիական)	ՀԵՏԱՁՈՏ.	2600	
0757102	Ինտեգենոգրաֆիա մեկ նկար /ժապավեն 18x24/ (մանկաբարձական և գինեկոլոգիական)	ՀԵՏԱՁՈՏ.	2500	
0757103	Ինտեգենոգրաֆիա մեկ նկար /ժապավեն 13x18/ (մանկաբարձական և գինեկոլոգիական)	ՀԵՏԱՁՈՏ.	2300	
0757110	Ինտեգենոսկոպիա (մեկ հետազոտություն) (մանկաբարձական և գինեկոլոգիական)	ՀԵՏԱՁՈՏ.	2200	
0757120	Ֆլուորոգրաֆիա (մեկ անձ)(մանկաբարձական և գինեկոլոգիական)	ՀԵՏԱՁՈՏ.	1900	
0757130	Ֆիզիոթերապիա (մեկ սեսիա)՝ 1 անձին համար ոչ ավել քան 10000 դրամ (մանկաբարձական և գինեկոլոգիական)	ՍԵՆԱՍ	1150	
0757140	Բակտերիոլոգիական հետազոտություն(մանկաբարձական և գինեկոլոգիական)	ՀԵՏԱՁՈՏ.	1500	
0757141	Խորխի բակտերիոլոգիական հետազոտություն	ՀԵՏԱՁՈՏ.	1600	
0757142	Խորխի բակտերիոլոգ. հետազոտ. դեղորայքային զգայունության որոշումով (մանկաբարձական և գինեկոլոգիական)	ՀԵՏԱՁՈՏ.	1900	
0757143	Մանտուի փորձ, Տուբերկուլինոգիաշտտիկա (յուրաքանչյուր 1 հետազոտության համար) (մանկաբարձական և գինեկոլոգիական)	ՀԵՏԱՁՈՏ.	290	
0757151	Խորխի բակտերիոսկոպիկ հետազոտություն	ՀԵՏԱՁՈՏ.	490	
0757152	Բակտերիոսկոպիկ հետազոտություն	ՀԵՏԱՁՈՏ.	490	
0757160	Բիոքիմիական հետազոտություն՝ 1 անձին առնվազն 3 բաղադրիչի որոշումով	ՀԵՏԱՁՈՏ.	1050	
0757161	Արյան մեջ գլյուկոզայի որոշում	ՀԵՏԱՁՈՏ.	380	
0757162	Արյան մեջ խոլեստերինի որոշում	ՀԵՏԱՁՈՏ.	380	
0757163	Բիոքիմիական հետազոտ.՝ 1 անձին մինչև 3 բաղադրիչի որոշման դեպքում յուրաքանչյուր բաղադրիչը	ՀԵՏԱՁՈՏ.	490	
0757170	Ֆունկցիոնալ հետազոտություններ (ֆունկցիոնալ զգայունություն, սպիրոգրաֆիա և այլն)	ՀԵՏԱՁՈՏ.	1400	
0757171	ԷԿԳ	ՀԵՏԱՁՈՏ.	1400	
0757180	Ֆիտոլոգիական հետազոտություն	ՀԵՏԱՁՈՏ.	1050	
0757200	Շրտիանոլ (կամ կլինիկական) հետազոտություններ՝ 1 անձին առնվազն 3 բաղադրիչի որոշումով	ՀԵՏԱՁՈՏ.	1050	
0757202	Արյան ընդհանուր բնություն /ելկոֆորմոլայալ	ՀԵՏԱՁՈՏ.	1050	
0757203	Արյան ընդհ. բնությ.՝ առանց /ելկոֆորմոլայալ՝ 1 անձին առնվազն 3 բաղադրիչի որոշումով	ՀԵՏԱՁՈՏ.	490	
0757204	Մեզի ընդհանուր բնություն	ՀԵՏԱՁՈՏ.	490	
0757205	Շրտիանոլ (կամ կլինիկական) հետազոտություններ՝ 1 անձին մինչև 3 բաղադրիչի որոշման դեպքում յուրաքանչյուր բաղադրիչը	ՀԵՏԱՁՈՏ.	490	
0757206	Արյան ընդհ. բնությ.՝ առանց /ելկոֆորմոլայալ՝ 1 անձին մինչև 3 բաղադրիչի որոշումով	ՀԵՏԱՁՈՏ.	160	
0757219	Սրտոգրաֆիկ հետազոտություն (մեկ ռեպլի ադժեք)՝ անվախ տեղակայումների քանակ(ից)	ՀԵՏԱՁՈՏ.	3300	
0757220	Պոտի սրտոգրաֆիա	ՀԵՏԱՁՈՏ.	1750	
0757264	Ինտեգենոգրաֆիա մեկ նկար /ժապավեն 35x43/ (մանկաբարձական և գինեկոլոգիական)	ՀԵՏԱՁՈՏ.	3300	
0759000	Անվճար և արտոնյալ պայմ. դեղորայքի տրամադրում (փաստացի ծախս) (մանկաբարձական և գինեկոլոգիական)	ԴՐԱՄ	1	
2.1	Ներքին բժշկական (ընդհանուր թերապևտիկ)			
0201000	Շրտիանոլ թերապևտիկ	ԴԵՊԲ	107900	
0201001	Շրտիանոլ թերապևտիկ ցերեկային ստացիոնարում	ԴԵՊԲ	43160	
0201002	Սրտամկանի սուր ինֆարկտ՝ ներառյալ ինտենսիվ թերապիա /առանց վերակենդանացման ծառայությունների/	ԴԵՊԲ	107900	
0201003	Ինտուկտ՝ ներառյալ ինտենսիվ թերապիա /առանց վերակենդանացման ծառայությունների/	ԴԵՊԲ	107900	
0201004	Հիպերտոնիկ կրիզ /մեծ/	ԴԵՊԲ	23500	
0211203	Սրտամկանի սուր ինֆարկտ՝ ներառյալ III մակարդակի վերակենդանացման ծառայությունները	ԴԵՊԲ	184600	
0211303	Ինտուկտ՝ ներառյալ III մակարդակի վերակենդանացման ծառայությունները (ընդհ. թերապևտիկ)	ԴԵՊԲ	235800	
2.2	Մանկաբուժական			
0501000	Շրտիանոլ մանկաբուժական	ԴԵՊԲ	153400	22000
0501001	Շրտիանոլ մանկաբուժական ցերեկային ստացիոնարում	ԴԵՊԲ	61360	8800
0501002	Հիպերտոնիկ կրիզ/երեխա/	ԴԵՊԲ	39000	
0501010	Տոնզիլիտներ, վերին շնչառական ուղիների բորբոքային հիվանդություններ (ոփխիտներ, փրոնաֆիտներ, ֆարինգիտներ, լարինգիտներ, տոնզիլիտներ) (մանկաբուժական)	ԴԵՊԲ	98000	14000
0501011	Բրոնխիտներ, թոքաբորբեր (երեխա)	ԴԵՊԲ	112000	16000
0601400	Կրծքի հասակի երեխաներ	ԴԵՊԲ	247500	19000
0601401	Կրծքի հասակի երեխաների տոնզիլիտներ, վերին շնչառական ուղիների բորբոքային հիվանդություններ (ոփխիտներ, փրոնաֆիտներ, ֆարինգիտներ, լարինգիտներ, տոնզիլիտներ)	ԴԵՊԲ	112000	
0601402	Կրծքի հասակի երեխաների բրոնխիտներ, թոքաբորբեր (միջին ծանրության)	ԴԵՊԲ	144000	16000
2.3	Մանկաբարձական			
0104000	Նորմալ և թեթև շեղումներով ծննդաբերություն	ԴԵՊԲ	140000	
0114000	Բարդացած ծննդաբերություն	ԴԵՊԲ	165000	
0114100	Բարդացած ծննդաբերություն /չափաբաժինների գերազանցումով	ԴԵՊԲ	140000	
0204003	Հղիության արտաբերություն /ընդ/	ԴԵՊԲ	117300	13000
0204006	Ծննդաբերություն կեսարյան հատումով /միայն I աստիճանի բարդություններ/	ԴԵՊԲ	220000	

0204103	Հղիության արտաքինություն գեր. ստացիոնարում /ընդ./	ԴեՊՔ	46920	5200
0205005	Արգանդի խոռոչի ընդուն հիվանդանոցային պայմաններում /մեծ/մանկաբարձ./	ԴեՊՔ	23500	
0214006	Շնչառություն կեսարյան հատումով /չափաքաթիկների գերազանցումով	ԴեՊՔ	140000	
0301292	Փոքր կեսարյան հատում	ԴեՊՔ	107900	
0301293	Տնային պայմաններում ծննդաբերությունից հետո տեղափոխված	ԴեՊՔ	50000	
0301296	Հղիության արտաքինություն	ԴեՊՔ	130100	14400
0301298	Հղիության արտաքինություն գեր. ստաց.	ԴեՊՔ	52040	5760
2.4	Գինեկոլոգիական			
0205003	Արգանդի խոռոչի ընդուն հիվանդանոցային պայմաններում /մեծ/գինեկ./	ԴեՊՔ	23500	
0205004	Վիրահատություններ արտաքին սեռական օրգանների և հեշտոցի պատերի վնասվածքների ժամանակ /մեծ/	ԴեՊՔ	23500	
0301294	Գինեկոլոգիական /մեծ/	ԴեՊՔ	107900	
0301297	Գինեկոլոգիական գերեկային ստացիոնարի պայմաններում/մեծ/	ԴեՊՔ	43160	
1101200	Արգանդի խոռոչի ընդուն , հղիության արհեստական ընդհատում	ԴեՊՔ	40000	
1101201	Շեղի և/կամ հեշտոցի պատերի բարորակ նորագոյացությունների հեռացում; արգանդի պարանոցի ամպուտացիա,	ԴեՊՔ	100000	
1101202	Հեշտոցի միջնապատի հատում; քարոտիկյան գեղձի կիստայի հեռացում	ԴեՊՔ	114000	
1101203	LUNA, հեշտոցի պատերի պլաստիկ; կոնսերվատիվ միոմէկտոմիա	ԴեՊՔ	220000	
1101204	Սուրստալ արդյունաչ փստերէկտոմիա; սպաիւնէկտոմիա; օվարիէկտոմիա; աղնեքսէկտոմիա (բորորչային ուտոցքների դեպքում); ձկարանի կիստայի և/կամ կիստոմաների հեռացում	ԴեՊՔ	230000	
1101205	Վագինալ փստերէկտոմիա; Մանչեստերյան վիրահատություն	ԴեՊՔ	270000	
1101206	Տոտալ արդյունաչ փստերէկտոմիա; Վագինալ փստերէկտոմիա տրիպլեքս; վիրահատություն արտոփստերէկտոմիլ արդապատաի դեպքում	ԴեՊՔ	300000	
1101207	Տոտալ լապարասկոպիկ փստերէկտոմիա; կոպոիփստերէկտոմիա; ռեկտո-վագինալ տարաձեի որովայնաձգի լապարասկոպիկ հեռացում; վուլվէկտոմիա	ԴեՊՔ	280000	
1101208	Տոտալ արդյունաչ փստերէկտոմիա հարալից օրգանների վրա ուտոցքի տարաձմամք	ԴեՊՔ	331000	
1101209	Պանիփստերէկտոմիա իլեո-պարաստրտալ լիմֆոդիսեկցիայով; Լայնացված վուլվէկտոմիա աճուկա-իլեոկալ լիմֆոդիսեկցիայով	ԴեՊՔ	331000	
1101210	Տոտալ արդյունաչ փստերէկտոմիա TOT-ով; վագինալ փստերէկտոմիա լապարասկոպիկ ափստեկցիայով (LAVH) TOT-ով; Վագինալ փստերէկտոմիա տրիպլեքս TOT-ով; վիրահատություն արոիփստերէկտոմիլ արդապատաի դեպքում TOT-ով	ԴեՊՔ	331000	
1101211	Վիրահատություններ անմիջապահության ժամանակ TOT-ով (առանց ժապավենի գնի)	ԴեՊՔ	331000	
1101212	Էնդոմետրիոի օջախների կոագուլացիա կամ Էնդոմետրիայի կիստայի հեռացում; ռետրոցերվիկալ Էնդոմետրիոի;	ԴեՊՔ	280000	
1101213	Հիստերոսկոպիա լապարասկոպիայի հսկողության տակ	ԴեՊՔ	280000	
1101214	Պրոմոտտ ֆիքսացիա/արգանդի, հեշտոցի պատերի մկանների և դարավանդի ֆիքսացիա/	ԴեՊՔ	510000	
1101215	Արգանդի վզիկի կրիոդեստրոկցիա ներերակային անզգայացումով	ԴեՊՔ	110500	
1101216	Աճուկա-ագրոպիլն լիմֆոդիսեկցիա միակողմանի	ԴեՊՔ	255000	
1101217	Աճուկա-ագրոպիլն լիմֆոդիսեկցիա երկկողմանի	ԴեՊՔ	382000	
1101814	Ախտորոշիչ հիստերոսկոպիա	ԴեՊՔ	100000	
1102735	Ձվարանների չարորակ ուտոցքների հեռացում	ԴեՊՔ	331000	
2101200	Արգանդի խոռոչի ընդուն , հղիության արհեստական ընդհատում	ԴեՊՔ	40000	
2101201	Շեղի և/կամ հեշտոցի պատերի բարորակ նորագոյացությունների հեռացում; արգանդի պարանոցի ամպուտացիա,	ԴեՊՔ	100000	
2101202	Հեշտոցի միջնապատի հատում; քարոտիկյան գեղձի կիստայի հեռացում	ԴեՊՔ	114000	
2101203	LUNA, հեշտոցի պատերի պլաստիկ; կոնսերվատիվ միոմէկտոմիա	ԴեՊՔ	220000	
2101204	Սուրստալ արդյունաչ փստերէկտոմիա; սպաիւնէկտոմիա; օվարիէկտոմիա; աղնեքսէկտոմիա (բորորչային ուտոցքների դեպքում); ձկարանի կիստայի և/կամ կիստոմաների հեռացում	ԴեՊՔ	230000	
2101205	Վագինալ փստերէկտոմիա; Մանչեստերյան վիրահատություն	ԴեՊՔ	270000	
2101206	Տոտալ արդյունաչ փստերէկտոմիա; Վագինալ փստերէկտոմիա տրիպլեքս; վիրահատություն արտոփստերէկտոմիլ արդապատաի դեպքում	ԴեՊՔ	300000	
2101207	Տոտալ լապարասկոպիկ փստերէկտոմիա; կոպոիփստերէկտոմիա; ռեկտո-վագինալ տարաձեի որովայնաձգի լապարասկոպիկ հեռացում; վուլվէկտոմիա	ԴեՊՔ	280000	
2101208	Տոտալ արդյունաչ փստերէկտոմիա հարալից օրգանների վրա ուտոցքի տարաձմամք	ԴեՊՔ	331000	
2101209	Պանիփստերէկտոմիա իլեո-պարաստրտալ լիմֆոդիսեկցիայով; Լայնացված վուլվէկտոմիա աճուկա-իլեոկալ լիմֆոդիսեկցիայով	ԴեՊՔ	331000	
2101210	Տոտալ արդյունաչ փստերէկտոմիա TOT-ով; վագինալ փստերէկտոմիա լապարասկոպիկ ափստեկցիայով (LAVH) TOT-ով; Վագինալ փստերէկտոմիա տրիպլեքս TOT-ով; վիրահատություն արոիփստերէկտոմիլ արդապատաի դեպքում TOT-ով	ԴեՊՔ	331000	
2101211	Վիրահատություններ անմիջապահության ժամանակ TOT-ով (առանց ժապավենի գնի)	ԴեՊՔ	331000	
2101212	Էնդոմետրիոի օջախների կոագուլացիա կամ Էնդոմետրիայի կիստայի հեռացում; ռետրոցերվիկալ Էնդոմետրիոի;	ԴեՊՔ	280000	
2101213	Հիստերոսկոպիա լապարասկոպիայի հսկողության տակ	ԴեՊՔ	280000	
2101214	Պրոմոտտ ֆիքսացիա/արգանդի, հեշտոցի պատերի մկանների և դարավանդի ֆիքսացիա/	ԴեՊՔ	510000	
2101215	Արգանդի վզիկի կրիոդեստրոկցիա ներերակային անզգայացումով	ԴեՊՔ	110500	
2101216	Աճուկա-ագրոպիլն լիմֆոդիսեկցիա միակողմանի	ԴեՊՔ	255000	
2101217	Աճուկա-ագրոպիլն լիմֆոդիսեկցիա երկկողմանի	ԴեՊՔ	382000	
2101814	Ախտորոշիչ հիստերոսկոպիա	ԴեՊՔ	100000	
2102735	Ձվարանների չարորակ ուտոցքների հեռացում	ԴեՊՔ	331000	
2.5	Շնչառություն վիրաբուժական			
0201005	Սուր միզակալություն /մեծ/	ԴեՊՔ	23500	
0201006	Երկվամային խիթ /մեծ/	ԴեՊՔ	23500	
0202000	Շնչառություն վիրաբուժական /մեծ./	ԴեՊՔ	107900	
0202010	Փոքր վիրահատական միջամտություններ /մեծ/	ԴեՊՔ	23500	
0301080	Թարախային վիրաբուժություն (ներառյալ արյան ցանքով հաստատված սեպսիս) /մեծ/	ԴեՊՔ	217900	13600
0302004	Վիրաբուժական բաժանմունքներում բժշկական հակացուցումներով չվիրահատված հիվանդների հետազոտությունների փոխհատուցում /մեծ/	ԴեՊՔ	15000	
0502001	Շնչառություն վիրաբուժական (երեխա)	ԵՐԵՄԻԱ	179000	
0709002	Բուժհաստատության միջոցներով գնված հակաթոյն դեղորայքի փաստացի ծախս	ԴՐԱՄ	120000	
1700000	Վերջի առաջնային վիրաբուժական մշակում և կարում	ԴեՊՔ	12000	
1700001	Պարոնիխիաներ, ներառած եղունգ, եղունգի հեռացում	ԴեՊՔ	12000	
1700002	Ֆիգամոնայի, թարախակոյտի (արքսես) բացում	ԴեՊՔ	12000	
1700003	Կեղանիների կողմից հասցված վնասվածքների առաջնային վիրաբուժական մշակում (ՀՓ կամ ՀԿ չհեռվների ներարկմամբ)	ԴեՊՔ	12000	
1700004	Փոքր վերջերի վիրակալություններ առանց կարերի	ԴեՊՔ	4000	
1700005	Ուլտրաճային պոնկցիա	ԴեՊՔ	17000	
1700006	Լորէկտոմիա	ԴեՊՔ	450000	
1700007	Կրծքային փոքր վիրահատություններ՝ կրծքավանդակի պատի ուտոցքների հեռացում առանց ընդհանուր անզգայացման	ԴեՊՔ	125000	
1700008	Պլեկալ խոռոչի դրենալորում	ԴեՊՔ	70000	
1700009	Պլեկալ պոնկցիա	ԴեՊՔ	25000	
1700010	Վենէկտոմիա, թրոմբէկտոմիա (թրոմբէկտոմիա)	ԴեՊՔ	240000	
1700011	Վիրահատություններ պերիֆերիկ զարկերակների վրա, Էնդարտերէկտոմիա	ԴեՊՔ	300000	
1700012	Փոքր անոթային վիրահատություններ	ԴեՊՔ	145000	
1700013	Երկկողմանի վենէկտոմիա	ԴեՊՔ	350000	
1700014	Ապենդէկտոմիա	ԴեՊՔ	170000	
1700015	Ապենդէկտոմիա լապարասկոպիկ	ԴեՊՔ	220000	
1700016	Լեղապարկի հեռացում	ԴեՊՔ	200000	
1700017	Լեղապարկի հեռացում լապարասկոպիկ	ԴեՊՔ	220000	
1700018	Լյարդի էլիսնոկոի հեռացում		238000	
1700019	Լյարդի էլիսնոկոի հեռացում լապարասկոպիկ	ԴեՊՔ	250000	
1700020	Զոլովաճախատում միակողմանի (առանց ցանցի արժեքի)	ԴեՊՔ	200000	
1700021	Զոլովաճախատում լապարասկոպիկ միակողմանի (առանց ցանցի արժեքի)	ԴեՊՔ	240000	
1700022	Վենոպալ մեծ ճողվածք (առանց ցանցի արժեքի)	ԴեՊՔ	250000	
1700023	Փայծախի հեռացում	ԴեՊՔ	300000	
1700024	Վիրահատություններ խոլեդոխի վրա	ԴեՊՔ	382000	
1700025	Գաստրէկտոմիա	ԴեՊՔ	470000	
1700026	Հետորովայնաձգային ոչ օրգանային ուտոցքների հեռացում	ԴեՊՔ	300000	

1700027	Մեծ ճարպոկի հեռացում	ԴեՊՔ	210000	
1700028	Փոքրածախկ ուտուցների հեռացում (տեղային անզգայացմամբ)	ԴեՊՔ	76000	
1700029	Փոքրածախկ ուտուցների հեռացում (ընդհանուր անզգայացմամբ)	ԴեՊՔ	120000	
1700030	Վիրահատություններ խցային հիվանդության կապակցությամբ	ԴեՊՔ	300000	
1700031	Վիրահատություններ անանցանելիության դեպքում	ԴեՊՔ	300000	
1700032	Ախտորոշիչ լապարոտոմիա	ԴեՊՔ	153000	
1700033	Կարճ սանձիկ (հատում)	ԴեՊՔ	102000	
1700034	Սպիական ֆիմոզ (թվաատում)	ԴեՊՔ	102000	
1700035	Մետատուսնեղզ (մետատոմիա)	ԴեՊՔ	102000	
1700036	Թշխալ պլաստիկ ֆիմոզի կապակցությամբ	ԴեՊՔ	178500	
1700037	Հիպոսպադիա դիստալ ձև MAGPI եղանակով	ԴեՊՔ	178500	
1700038	Ամորձու թաղանթների ցրցորդության վիրահատություն	ԴեՊՔ	170000	
1700039	Սերմնալարի կիսատայի հեռացում	ԴեՊՔ	170000	
1700040	Օրիխէկտոմիա	ԴեՊՔ	170000	
1700041	Օրիխէկտոմիա երկկողմանի	ԴեՊՔ	170000	
1700042	Ներքին աճուկային օդից վար կրիպտորիսիզմի վիրահատություն	ԴեՊՔ	195500	
1700043	Սերմնալարի երակների լայնացում՝ բարձր հատում	ԴեՊՔ	170000	
1700044	Ամորձու սուր հիվանդություններ, ամորձու ոլորում, ամորձու պատվածք, կախցիկի ոլորում, սուր օրիտիզիդիդիտ և այլ	ԴեՊՔ	170000	
1700045	Առնանդամի ամպուտացիա	ԴեՊՔ	195000	
1700046	Երկվանդերի վնասվածքներ, որոնք պահանջում են վիրահատական միջամտություն	ԴեՊՔ	450000	
1700047	Սիգածորանի ստենոպիլոտոմիա	ԴեՊՔ	59000	
1700048	Ուրեթրոցիստոսկոպիա ախտորոշիչ նպատակով	ԴեՊՔ	35000	
1700049	Պերլուտում ցիստատոմիա	ԴեՊՔ	59000	
1700050	Ներքին թուքքային հանցուցքների լիզակտրոմ	ԴեՊՔ	153000	
1700051	Պարապրոկտիտի, պրոկտի էպիթելային խոտրակի կտրվածք	ԴեՊՔ	119000	
1700052	Անալ ստրիկտուրայի վերացում	ԴեՊՔ	119000	
1700053	Թիւթքախտում և/կամ ճաքի հեռացում	ԴեՊՔ	160000	
1700054	Պարապրոկտիտի բացազատում աղիքի լուսանցքում	ԴեՊՔ	160000	
1700055	Ախտահարված հյուսվածքների հեռացում	ԴեՊՔ	160000	
1700056	Ուիդիդ աղիքի օտար մարմնի տրանսանալ հեռացում	ԴեՊՔ	153000	
1700057	Պերիտալ կանցիդոմաների հեռացում	ԴեՊՔ	153000	
1700058	Պրոկտի էպիթելային խոտրակի հեռացում	ԴեՊՔ	160000	
1700059	Միջին տարածվածություն պնտախարված հյուսվածքների հեռացում	ԴեՊՔ	204000	
1700060	Պրոկտիկտոմիա կոնստրուկտի միջոցով	ԴեՊՔ	160000	
1700061	Ռեկտոցեկեի վերացում	ԴեՊՔ	204000	
1700062	Իլեո-կոլոտոմիայի ձևակտրոմ	ԴեՊՔ	255000	
1700063	Աղիների շրջանցող բերանակցում	ԴեՊՔ	255000	
1700064	Կոլոտոմիա	ԴեՊՔ	255000	
1700065	Անալոքր պարապրոկտիտի բացազատում	ԴեՊՔ	255000	
1700066	Տարածված պնտախարված հյուսվածքների հեռացում	ԴեՊՔ	255000	
1700067	Խթարոլ մասնահատում ստոմպով	ԴեՊՔ	306000	
1700068	Շրջանաձև կարող սարքի օգտագործմամբ հաստ արու վերականգնողական վիրահատություններ Գարտմանի տիպի և Միկրոփիլի վիրահատություններից հետո	ԴեՊՔ	340000	
1700069	Խթարոլ մասնահատում բերանակցմամբ	ԴեՊՔ	340000	
1700070	Կոլոպրոկտիկտոմիա, համակցված վիրահատություններ	ԴեՊՔ	382000	
1700071	Պրոկտիկտոմիա ռեկտոսկոպի միջոցով	ԴեՊՔ	30000	
1700072	Փոքր մետաղական կոնստրուկցիայի հեռացում (բացառությամբ արտաօջախային կոնստրուկցիաների)	ԴեՊՔ	100000	
1700073	Մեծ մետաղական կոնստրուկցիայի հեռացում	ԴեՊՔ	153000	
1700074	Անալոկոկտի, թիւթքախտի, ձևկոկտի, Նրոքոկտի, ճաքախտից ցրցորդացած կոտրվածքների վիրահատություններ	ԴեՊՔ	180000	
1700075	Ճաքախտի, ձևկոկտի, Նրոքոկտի, ճաքախտից ցրցորդացած կոտրվածքների վիրահատություններ	ԴեՊՔ	240000	
1700076	Անալոկոկտի, թիւթքախտի, ձևկոկտի, Նրոքոկտի, ճաքախտից ցրցորդացած կոտրվածքների վիրահատություններ	ԴեՊՔ	240000	
1700077	Բազիլոկտի, նախաբազիլ ոսկրների, ոլորի պարզ ցրցորդացած կոտրվածքների վիրահատություններ	ԴեՊՔ	260000	
